# ՀՈՒՇԱԳԻՐ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԻՐԿՈՒՏՍԿԻ ՄԱՐԶԻ ԻՐԿՈՒՏՍԿ ՔԱՂԱՔԻ (ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ) ՄԻՋԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Հայաստանի Հանրապետություն) և Իրկուտսկի մարզի Իրկուտսկ քաղաքը (Ռուսաստանի Դաշնություն), այսուհետ՝ Կողմեր, ձգտելով բարեկամական հարաբերությունների ստեղծմանը և առաջնորդվելով հավասարության և փոխշահավետության սկզբունքներով, համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

Գործընկերային հարաբերություններն առավել արդյունավետ զարգացնելու նպատակով Կողմերը մտադիր են զարգացնել համագործակցությունը հետևյալ գերակա ուղղություններով՝

- կրթություն.
- մշակույթ.
- սպորտ.
- զբոսաշրջություն:

## Հոդված 2

Կողմերը, հիմնվելով հավասարության և գործընկերության սկզբունքների վրա, համաձայն սույն Հուշագրի և իրենց իրավասությունների շրջանակներում, կնպաստեն կրթության, մշակույթի, սպորտի և զբոսաշրջության բնագավառներում համագործակցության ընդլայնմանը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 3

Կողմերն իրականացնում են փոխադարձ այցեր, փորձի փոխանակում, ինչպես նաև իրականացնում են ընդհանուր նախագծեր՝ սույն Հուշագրի առաջին հոդվածով նախատեսված ուղղություններով:

Սույն Հուշագիրը չի սահմանափակում կողմերի՝ համագործակցության նոր ուղղություններ և ձևեր սահմանելու իրավունքը:

## Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրն ինքնուրույն է հոգում սույն Հուշագրի դրույթների իրականացման հետ կապված ծախսերը: Պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված կամ այլ դեպքերում ծախսերը կրում է ընդունող Կողմը ՝ փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 5

Սույն Հուշագրի շրջանակներում համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացման նպատակով Կողմերի վստահված ներկայացուցիչները, անհրաժեշտության դեպքում, կանցկացնեն նախնական խորհրդատվություններ և կկազմակերպեն կոնկրետ միջոցառումներ՝ նշելով դրանց իրականացման պայմանները:

Հոդված 6

Սույն Հուշագիրը Կողմերի համաձայնությամբ կարող է փոփոխվել և լրացվել առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են դրա բաղկացուցիչ մասը:

Կողմերի համաձայնությամբ սույն Հուշագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և հանդիսանում են սույն Հուշագրի բաղկացուցիչ մասը:

Կողմերը սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծում են խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 7

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից որևէ մեկը վեց ամիս առաջ գրավոր չծանուցի մյուս Կողմին՝ այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Ստորագրված է քաղաք Իրկուտսկում հուլիսի "21"-ին 2023 թ. երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ | ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԿՈՒՏՍԿ ՔԱՂԱՔԻ ԿՈՂՄԻՑ |
| --- | --- |
| Արմավիր համայնքի ղեկավար՝ | Իրկուտսկի Քաղաքապետ՝ |
| ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ | ԲՈԼՈՏՈՎ ՌՈՒՍԼԱՆ ՆԻԿՈԼԱՅԻ |

**МЕМОРАНДУМ О СОТРУДНИЧЕСТВЕ МЕЖДУ ГОРОДОМ ИРКУТСК ИРКУТСКОЙ ОБЛАСТИ (РОССИЙСКАЯ ФЕДЕРАЦИЯ) И ОБЩИНОЙ АРМАВИР АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ (РЕСПУБЛИКА АРМЕНИЯ) В НАУЧНОЙ И СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОЙ СФЕРАХ**

Город Иркутск (Иркутская область, Российская Федерация) и община Армавир (Армавирская область, Республика Армения), именуемые в дальнейшем Сторонами, стремясь к установлению дружеских отношений и руководствуясь принципами равноправия и взаимной выгоды, договорились о нижеследующем:

Статья 1

В целях более эффективного развития партнерских отношений Стороны намерены развивать сотрудничество по следующим приоритетным направлениям:

- образование,
- культура,
- спорт,
- туризм.

Статья 2

Стороны, основываясь на принципах равноправия и партнерства, в соответствии с настоящим Меморандумом и в пределах своих полномочий будут способствовать расширению сотрудничества в сферах образования, культуры, спорта и туризма в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения.

Статья 3

Стороны осуществляют взаимные визиты, обмен опытом, а также осуществляют совместные проекты по направлениям, предусмотренным в первой статье настоящего Меморандума.

Настоящий Меморандум не ограничивает право Сторон определять новые направления и формы сотрудничества.

Статья 4

Каждая из сторон несет свои расходы, связанные с выполнением положений настоящего Меморандума. Расходы, связанные с приемом официальных делегаций или в других случаях, несет принимающая Сторона по взаимному согласию.

Статья 5

В целях осуществления совместных программ и проектов в рамках настоящего Меморандума, доверенные представители Сторон при необходимости проводят предварительные консультации и определяют конкретные мероприятия с указанием условий их выполнения.

Статья 6

Настоящий Меморандум может быть изменен и дополнен отдельными протоколами, являющимися его неотъемлемой частью, по соглашению Сторон.

По согласованию сторон в настоящий Меморандум могут быть внесены изменения и дополнения, которые оформляются отдельными протоколами и являются неотъемлемой частью настоящего Меморандума.

Стороны будут решать споры и разногласия, связанные с толкованием или применением положений настоящего Меморандума, путем консультаций и переговоров.

Статья 7

Настоящий Меморандум вступает в силу с даты подписания и остается в силе до тех пор, пока одна из Сторон не уведомит другую Сторону в письменной форме за шесть месяцев до его прекращения.

Подписан в городе Иркутске (Российская Федерация) « 21 » июля 2023 года в двух экземплярах, каждый на русском и армянском языках, при этом оба текста равнозначны.

| От города Иркутска, Российская Федерация | От общины Армавир, Республика Армения |
|---|---|
| _Подпись_ | _Подпись_ |
| Мэр города Иркутска | Глава общины Армавир |
| _Наименование должности подписанта_ | _Наименование должности подписанта_ |
| Болотов Руслан Николаевич | Худатян Давид Оганессович |
| _ФИО подписанта_ | _ФИО подписанта_ |